ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով յուրաքանչյուր մարդու կյանքի համար բարենպաստ միջավայրի եւ էկոլոգիական անվտանգության, շրջակա բնական միջավայրի վիճակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունքը,

ելնելով բնապահպանական գերատեսչությունների եւ կառավարման մարմինների, հասարակական եւ այլ կազմակերպությունների կողմից հավաստի եւ օպերատիվ էկոլոգիական տեղեկատվության օգտագործման անհրաժեշտությունից,

շրջակա բնական միջավայրի, բնական պաշարների եւ մարդու առողջության վրա բնական եւ տեխնածին գործոնների ազդեցության գնահատման, համապատասխան որոշումների եւ կանխամիջոցների ձեռնարկման նպատակով,

հատուկ նշանակություն տալով շրջակա բնական միջավայրի վիճակի կանխատեսման, բնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության դերին,

ղեկավարվելով էկոլոգիայի եւ շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում փոխգործողության մասին 1992 թվականի փետրվարի 8-ի Համաձայնագրի եւ 1996 թվականի հոկտեմբերի 18-ի Անկախ Պետությունների Համագործակցության տեղեկատվական դաշտի ձեւավորման Հայեցակարգի դրույթներով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Տեղեկատվական համագործակցությունն իրականացվում է հետեւյալ ուղղություններով.

էկոլոգիական տեղեկատվության զանգվածային տարածման եւ փոխանակման բնագավառում տեղեկատվամեթոդական գործունեության ապահովում,

շրջակա բնական միջավայրի, բնօգտագործման հետ կապված վտանգավոր եւ այլ օբյեկտների վիճակի, էկոլոգիայի եւ բնության պահպանության բնագավառում գիտական եւ տեխնիկական մշակումների վերաբերյալ տվյալների շտեմարանի ստեղծում,

սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարման մարմինների, գերատեսչությունների եւ այլ կազմակերպությունների գործունեության տեղեկատվական ապահովում,

աղտոտող նյութերի անդրսահմանային տեղափոխումների, ինչպես նաեւ պլանավորվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

աջակցություն բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանը,

միջազգային էկոլոգիական կազմակերպությունների հետ համագործակցություն եւ տեղեկատվության փոխանակում:

Համատեղ գործունեության ուղղությունների ցանկը հետագայում կարող է ճշգրտվել Կողմերի առաջարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը կազմավորում են միջպետական էկոլոգիական-տեղեկատվական համակարգ (ՄԷՏՀ)՝ գոյություն ունեցող հաղորդակցման միջոցների եւ էկոլոգիական տեղեկատվություն պարունակող գործող կառույցների հիմքի վրա:

Կողմերը ՄԷՏՀ կազմավորման գործում համակարգող դերը դնում են Միջպետական էկոլոգիական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) վրա:

ՀՈԴՎԱԾ 3

ՄԷՏՀ օգտագործմամբ Կողմերի կողմից լուծվող Հիմնական խնդիրներն են.
էկոլոգիական տեղեկատվության օպերատիվ տարածում եւ փոխանակում,
արտակարգ էկոլոգիական իրավիճակների, վթարների, աղետների, վտանգավոր թափոնների տեղափոխման մասին տեղեկացում եւ տեղեկատվության տրամադրում,
Համագործակցության մասնակից պետությունների Կարմիր գրքերում մտցված կենդանիների եւ բույսերի տեսակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում շրջակա բնական միջավայրի վիճակի եւ բնապահպանական գործունեության մասին տարեկան զեկույցների պատրաստում եւ տարածում,
գիտահետազոտական եւ փորձարարակոնստրուկտորական աշխատանքների, գիտատեխնիկական եւ նորարարական ծրագրերի առաջադեմ էկոլոգիապես մաքուր եւ անվտանգ տեխնոլոգիաների մասին տեղեկացում,
բնապահպանական գործունեության բնագավառում էլեկտրոնային գրադարանի ստեղծում եւ վարում,
Համագործակցության մասնակից պետությունների բնապահպանական օրենսդրական ակտերի ներդաշնակեցման համար միջոցառումների տեղեկատվական աջակցություն,
աջակցություն էկոլոգիական նախագծերի իրագործման նպատակով ներդրումների ներգրավմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Ազգային էկոլոգիական տեղեկատվական ծառայությունների փոխազդեցությունն իրականացվում է առանձին պայմանավորվածությունների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը միջոցառումներ են ձեռնարկում ապահովելու համար տեղեկատվության սպառողների մուտքը շրջակա բնական միջավայրի մասին տվյալների միջազգային շտեմարաններ՝ միջազգային տեղեկատվական համակարգերում ինտեգրացվելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 6

ՄԷՏՀ ստեղծման ֆինանսավորումն իրականացվում է շահագրգիռ կազմակերպությունների միջոցների հաշվին:
Խորհուրդը սահմանում է ՄԷՏՀ ստեղծման, գործելու եւ էկոլոգիական տեղեկատվության սպառողների հետ փոխգործակցելու մեխանիզմը:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով կամ Կողմերի համաձայնեցրած այլ ընթացակարգերի օգնությամբ:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 9

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից, դուրս գալուց առնվազն երեք ամիս առաջ՝ այդ մասին ավանդապահին գրավոր ծանուցագիր ուղարկելով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ համապատասխան
փաստաթղթերը ավանդապահին հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը գործում է դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրը ինքնաբերաբար երկարաձգվում է ամեն անգամ հինգ տարով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող ցանկացած պետության կողմից դրան միանալու համար՝ բոլոր Կողմերի համաձայնությամբ եւ ավանդապահին այդպիսի միացման մասին փաստաթղթերը հանձնելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 1998 թվականի սեպտեմբերի 11-ին մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի փետրվարի 24-ից: